Ներկայացուցչի ձեր իրավունքը

Բովանդակություն

Ի՞նչ կարող է անել ներկայացուցիչը	1
Ներկայացուցչի ընտրությունը	2
Որքա՞ն վճար կարող է պահանջել ձեր ներկայացուցիչը	2
Վճարման պայմանագրի ներկայացումը	3
Վճարման միջնորդագրի ներկայացումը	3
Որքա՞ն վճարել	3
Եթե մեկ այլ անձ է վճարում ձեր ներկայացուցչին	4
Եթե ձեր հայցը ներկայացնում եք դաշնային դատարան	4
Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ	4

Դուք կարող եք ունենալ ներկայացուցիչ, օրինակ՝ փաստաբան կամ իրավապաշտպան, որը կօգնի ձեզ սոցիալական ապահովության գործընթացում: Մենք կաշխատենք ձեր ներկայացուցիչի հետ, ճիշտ այնպես, ինչպես ձեզ հետ:

Շատ դեպքերում, ձեր իսկ պաշտպանության համար, ձեր ներկայացուցիչը չի կարող գումար գանձել կամ վճարվել ձեր կողմից՝ առանց մեր կողմից նախապես գրավոր համաձայնություն ստանալու: Այնուամենայնիվ, ձեր ներկայացուցիչը կարող է նախապես գումար ստանալ ձեր կողմից, եթե դա պահվում է երրորդ վստահված անձի մոտ կամ գտնվում է գրավի տակ:

Դուք և ձեր ներկայացուցիչը պարտավոր եք մեզ հստակ տեղեկատվություն տրամադրել: Անօրինական է կեղծ տեղեկությունները գիտակցաբար կամ կանխամտածված կերպով տրամադրելը: Հակառակ դեպքում, կարող եք քրեական հետապնդման ենթարկվել:

Ի՞նչ կարող է անել ներկայացուցիչը

Այն պահից սկսած, երբ դուք ներկայացուցիչ եք նշանակում, նա կարող է սոցիալական ապահովության գործընթացներում հանդես գալ ձեր անունից՝ հետևյալ հարցերում.

SocialSecurity.gov

(շրջել)

- Ստանալ տեղեկատվություն ձեր սոցիալական ապահովության թղթապանակից,
- Օգնել ձեզ ստանալ բժշկական արձանագրություններ կամ տեղեկատվություն՝ կապված ձեր պահանջի պաշտպանության հետ,
- Ներկայանալ ձեզ հետ կամ ձեր անունից՝ մեր կազմակերպած ցանկացած հարցազրույցի, կոնֆերանսի կամ դատական լսումների,
- Վերանայել Բողոքարկման Խորհրդի դիրքորոշումը, դատաքննությունը, և
- Օգնել ձեզ և ձեր վկաներին պատրաստվել դատաքննությանը և ցանկացած վկայի հարցաքննութանը:

Ձեր ներկայացուցիչը կստանա նաև որոշման(ումների) կրկնօրինակը, որոնք կկազմվեն ձեր հայցադիմում(ներ)ի հիման վրա:

Ներկայացուցչի ընտրությունը

Դուք կարող եք ընտրել փաստաբան կամ այլ որակավորված անձ՝ ձեզ ներկայացնելու հարցում: Կարող եք ունենալ նաև մեկից ավելի ներկայացուցիչ: Սակայն, դուք չեք կարող ներկայացուցիչ նշանակել այն անձին, որն օրենքով չի կարող հանդես գալ որպես ներկայացուցիչ կամ սոցիալական ապահովության վարչության կողմից կասեցվել են նրա իրավունքները, կամ նա որակազրկել է անձանց իրավունքները ներկայացնելու թույլտվությունից:

Որոշ կազմակերպություններ կարող են օգնել ձեզ՝ գտնելու ներկայացուցիչ կամ տրամադրել անվճար իրավաբանական ծառայություններ, եթե դուք դրա իրավունքն ունեք: Որոշ ներկայացուցիչներ գումար չեն գանձում, եթե դուք նպաստներ չեք ստանում: Ձեր սոցիալական ապահովության գրասենյակն ունի կազմակերպությունների ցանկ, որոնք կարող են օգնել ձեզ ներկայացուցիչ գտնելու հարցում:

Դուք կարող եք որպես ներկայացուցիչ ընտրել մեկ կամ ավելի անձանց՝ ֆիրմայից, խոշոր ընկերություններից կամ այլ կազմակերպություններից, սակայն չեք կարող ներկայացուցիչ նշանակել ձեր նախընտրած ֆիրմային, խոշոր ընկերությանը կամ կազմակերպությանը:

Ներկայացուցիչ ընտրելուց հետո, հնարավորինս շուտ պետք է **գրավոր** այդ մասին տեղեկացնեք մեզ: Այս ամենն անելու համար, պետք է օգտագործել Ներկայացուցչի նշանակման SSA-1696-U4 ձևը, որը հասանելի է մեր ***www.socialsecurity.gov*** կայքէջում կամ սոցիալական ապահովության ցանկացած այլ գրասենյակում:

Անհրաժեշտ է տրամադրել մեզ այն անձի անունը, ում ներկայացուցիչ եք նշանակել և ստորագրել ձեր անվան դիմաց: Եթե անձը փաստաբան չէ, նա նույնպես պետք է ստորագրի վերոնշյալ ձևը:

Որքա՞ն վճար կարող է պահանջել ձեր ներկայացուցիչը

Ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու համար, ձեր ներկայացուցիչը պետք է մեզ հետ նախապես կնքի վճարումների գանձման պայմանագիր կամ վճարման միջնորդագիր:

Ձեր ներկայացուցիչը **չի կարող** գանձել ավելի գումար, քան հաստատվել է մեր կողմից: Եթե դուք կամ ձեր ներկայացուցիչը համաձայն չեք մեր կողմից առաջարկվող վարձատրությանը, ձեզանից յուրաքանչյուրը կարող է խնդրել մեզ վերանայել այն:

Եթե ներկայացուցչը գումար է գանձում ձեզնից առանց մեր համաձայնության կամ գանձում է ավելին, քան թույլատրված է, ապա մենք կարող ենք կասեցնել նրա՝ որպես որևէ մեկի ներկայացուցիչ հանդես գալու իրավունքները կամ որակազրկել նրան՝ նախքան սոցիալական ապահովության վարչության գործողութունները:

(շրջել)

Վճարման պայմանագրի ներկայացումը

Եթե դուք և ձեր ներկայացուցիչը կնքել եք գրավոր վճարային պայմանագիր, ապա ձեր ներկայացուցիչը ցանկացած ժամանակ կարող է խնդրել մեզ հաստատել այն՝ նախքան Ձեր հայցի վերաբերյալ որոշում կայացնելը: Սովորաբար մենք հաստատում ենք համաձայնագիրը և գրավոր տեղեկացնում, թե որքան կարող է գանձել Ձեր ներկայացուցիչը, եթե՝

- Ներկայացրել եք վճարման պայմանագիր՝ նախքան ձեր հայցի վերաբերյալ որոշման կայացումը
- Համաձայնագրի երկու կողմերը ստորագրել են այն
- Մենք հաստատել ենք ձեր հայցը և դուք իրավունք եք ձեռք բերել ստանալ նախորդ նպաստները
- Ձեր ներկայացուցչի հետ համաձայնեցված վճարը չի գերազանցում նախորդ նպաստների 25 տոկոսը կամ 6,000 ԱՄՆ դոլլարը. ընտրվում է երկու տարբերակներից նվազագույնը:

Մենք գրավոր կտեղեկացնենք ձեզ և ձեր ներկայացուցչին վճարման պայմանագիրը չհաստատելու մասին:

Վճարման միջնորդագրի ներկայացումը

Ձեր ներկայացուցիչը կարող է վճարման միջնորդագիր ներկայացնել Ձեր հայցադիմում(ներ)ի հետ կապված աշխատանքներն ավարտելուց հետո: Այս գրավոր դիմումով ձեր ներկայացուցիչը պետք է ներկայացնի իր կողմից մատուցված յուրաքանչյուր ծառայության համար ծախսված ժամանակի մանրամասն նկարագիրը: Ձեր ներկայացուցիչը պետք է ձեզ տրամադրի վճարման միջնորդագրի և յուրաքանչյուր հավելվածի պատճենները: Եթե դուք համաձայն չեք վճարման կամ ներկայացված տեղեկատվության հետ, ապա կապ հաստատեք մեզ հետ 20 օրվա ընթացքում: Մենք կքննարկենք ներկայացուցչական ծառայությունների ողջամիտ արժեքը և գրավոր կտեղեկացնենք մեր կողմից հաստատված վճարման արժեքի մասին: Եթե համաձայն չեք մեր կողմից առաջարկվող վճարի գումարի հետ, ապա անհրաժեշտ է գրավոր տեղեկացնել մեզ՝ թույլտվություն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում:

Որքա՞ն վճարել

Ըստ մեր որոշման ձեր ներկայացուցչին վճարվելիք գումարը այն առավելագույն պարտքի չափն է, որը նախատեսված է նրա մատուցած ծառայությունների համար, եթե նույնիսկ դուք համաձայնվել եք վճարել ավելին: Այնուամենայնիվ, ձեր ներկայացուցիչը կարող է ձեզանից գանձել այլ ծախսեր, օրինակ՝ առանց մեր հաստատումը պահանջող բժշկական ծախսեր:

Եթե փաստաբանը կամ չհավատարմագրված անձը վճարում ստանալու իրավասություն է ստացել սոցիալական ապահովության կողմից, ապա մենք կպահենք ձեր նախորդ նպաստների գումարի մինչև 25 տոկոսը այդ վճարումները կատարելու նատակով: Այդ գումարից մենք կվճարենք ներկայացուցչի վարձատրության ամբողջ կամ մասնակի ծախսերի գումարը, իսկ մնացորդը ետ կուղարկվի ձեզ:

Երբեմն դուք անձամբ պետք է վճարեք ձեր ներկայացուցչին.

- Դուք պետք է վճարեք ձեր պարտք մնացած գումարը, եթե հաստատված գումարն ավելին է, քան մեր կողմից պահված և ներկայացուցչին վճարված գումարը:
- Դուք պետք է վճարեք ամբողջական գումարը, եթե
  - — Ձեր ներկայացուցիչն ուղիղ վճարում ստանալու իրավասություն չունի,
  - — Ձեր հայցը չի ավարտվել վճարման ենթակա նախկին նպաստները ստանալու իրավունքով,

(շրջել)

— Սոցիալական ապահովության նախկին նպաստների 25 տոկոսը կամ լրացուցիչ ապահովության եկամուտների վճարումները, կամ երկուսը միասին, չեն պահվել մեր կողմից, կամ

— Ձեր ներկայացուցիչը ժամանակին դիմել է վարձատրության համար և մենք ուղարկել ենք ձեզ պահանջվող գումարը մեր պահուստից:

Դուք պետք է վճարեք ձեր ներկայացուցչի չնախատեսված ծախսերը կամ ենթադրյալ ծախսերը (օրինակ՝ բժշկի կամ հիվանդանոցի այցելության արձանագրությունների ծախսերը):

Եթե մեկ այլ անձ է վճարում ձեր ներկայացուցչին

Մենք պետք է հաստատենք ծախսերի դիմաց վճարումը, եթե նույնիսկ մեկ ուրիշ անձ է վճարելու (օրինակ՝ ընկեր կամ բարեկամ) ձեր փոխարեն, բացառությամբ այն դեպքերի, երբ

- Դա առևտրային, շահույթ հետապնդող կամ շահույթ չհետապնդող կազմակերպություն է կամ նահանգային, պետական, վարչատարածքային կամ քաղաքային իշխանության մարմին է, որը կվճարի գումարն ու այլ ծախսերը՝ իր սեփական միջոցներից, և
- Դուք և ցանկացած օժանդակ շահառու ուղղակի կամ անուղղակի պարտավորություն չունեք ներկայացուցչին կամ այլ անձանց ամբողջովին կամ մասամբ միջնորդավճարի կամ այլ ծախսերի վճարում կատարել, և
- Ձեր ներկայացուցիչը գրավոր հաստատում է, որ դուք ստիպված չեք լինելու վճարել որևէ ծառայության կամ ծախսերի համար:

Եթե ձեր հայցը ներկայացնում եք դաշնային դատարան

Դատարանը կսահմանի խելամիտ վարձավճար ձեր փաստաբանի համար: Մեզ այլևս անհրաժեշտ չի լինի հաստատել այն: Վճարը չի գերազանցի դատարանի որոշմամբ նշանակված նախկին նպաստների 25 տոկոսի շեմը: Ձեր փաստաբանը չի կարող լրացուցիչ դատական վարձավճարներ գանձել իր մատուցած ծառայությունների համար:

Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;

(շրջել)

- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ` Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ: